



**«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՄՊԸ ՀԱՏԱՆՈՐԴՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Աղյուսակ 1-ով, 2-ով, 3-ով, 4-ով և 5-ով սահմանված սակագնային/ծառայությունների փաթեթները նախատեսված են Ռոստելեկոմի թե՛ նոր, թե՛ գործող Բաժանորդների համար, ովքեր հանդիսանում են **«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՄՊԸ Գույր քարտապան:**

1. Աղյուսակ 1. «Վեգա Մոնո» սակագնային փաթեթի գնացուցակ՝ «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՄՊԸ Գույր քարտապանների համար

«Վեգա Մոնո» սակագնային փաթեթ	Արագություն	Ամսավճար
Ստարտ	9 Մբ/վ	6000
Կոմֆորտ	20 Մբ/վ	7000
Ուլտրա	40 Մբ/վ	7500
Պրեմիում	75 Մբ/վ	10000

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

- 1.1. «Վեգա Մոնո» սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում՝
 - i. «10 մբ/վ արագություն» ներառվում է «Մոնո» սակագնային փաթեթում՝ ի լրումն տվյալ սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության:
- 1.2. Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.1. i կետում նշված կարգով ստացել է 10 մբ/վ արագություն և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Մոնո» սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի, «Մարզային 4900» սակագնին, «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել 10 մբ/վ արագությունից անկախ նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից:
- 1.3. «Վեգա Մոնո» սակագնային փաթեթի հետ կապված բոլոր այն պայմանները, որոնք սահմանված չեն սույն պայմաններում, համապատասխանում են «Մոնո» սակագնային փաթեթի պայմաններին:

2. Աղյուսակ 2. «Վեգա Մարզային 4900» սակագնային փաթեթի գնացուցակ՝ «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՄՊԸ Գույր քարտապանների համար

«Վեգա Մարզային 4900» սակագին	Արագություն	Ամսավճար
«Վեգա 4900»	5 Մբ/վ	4900

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

- 2.1. «Վեգա Մարզային 4900» սակագնին հնարավոր է բաժանորդագրվել բացառապես 1 տարվա պարտադիր բաժանորդագրության պայմանով, և Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել Ծառայություններից:
 - i. Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է «Վեգա Մարզային 4900» սակագնի պայմաններում (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) տրամադրվում է առանց վճարի գանձման):
 - ii. Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական /արագության համեմատ կրկնակի ավելի բարձր արագություն պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ:
 - iii. «10 մբ/վ արագություն» ներառվում է «Վեգա Մարզային 4900» սակագնային փաթեթում վերջինիս պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ:

- 2.2. Գործող Բաժանորդը, պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով միանալով «Վեգա Մարզային 4900» սակագնային փաթեթին կամ վերակնքելով գործող տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը «Վեգա Մարզային 4900» սակագնային փաթեթի շրջանակում, ստանում է սույն պայմանների կետ 2.1.-ի i. և iii. ենթակետերով սահմանված պայմանները, ինչպես նաև Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ եռակի ավելի բարձր արագություն պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ ճառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ: Գործող բաժանորդները, ովքեր օգտվում են «Վեգա Մարզային 4900» սակագնային փաթեթից, և պարտադիր տարեկան բաժանորդագրության ժամկետը արդեն լրացել է, և վերջիններս հանդիսանում են «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ Գույր քարտապան, կշարունակեն ստանալ սույն պայմանների կետ 2.1.-ի iii ենթակետով սահմանված արագությունը՝ առանց պայմանագիրը վերակնքելու պայմանի:
- 2.3. Եթե Բաժանորդը սույն պայմանների 2.1. iii. կետում նշված կարգով ստացել է 10 մբ/վ արագություն և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել 10 մբ/վ արագությունից անկախ նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից:
- 2.4. «Վեգա Մարզային 4900» սակագնային փաթեթի հետ կապված բոլոր այն պայմանները, որոնք սահմանված չեն սույն պայմաններում, համապատասխանում են «Մարզային 4900» սակագնային փաթեթի պայմաններին:



Rostelecom

3. Աղյուսակ 3. «Վեգա Սմարթ» սակագնային փաթեթի գնացուցակ՝ «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ Գողք քարտապանների համար

Սակագնային փաթեթ Սմարթ	Ստարտ	Պրեմիում
Հիմնական ծառայություններ		
Ներառված հեռուստաալիքների քանակ ¹	առնվազն 50	առնվազն 170
Հավելյալ ծառայություններ		
Մուլտիրում	հասանելի ²	ներառված
Մուլտիրում ծառայության հավելյալ սմարթ սարք	հասանելի	հասանելի
SmartBox Wi-Fi	հասանելի	ներառված՝ SmartBox Wi-Fi 1, SmartBox Wi-Fi 2
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի	ներառված
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	5 օր	5 օր
Առանձին հեռուստաալիքներ	հասանելի	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի	հասանելի
Ակտիվացման վճար ³	10000 դրամ	10000 դրամ
Ամսավճար	4000 դրամ	8500 դրամ

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

3.1. «Վեգա Սմարթ» սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում՝

- i. Սույն պայմանների Աղյուսակ 7-ով սահմանված 20 հեռուստաալիքները ներառվում են «Վեգա Սմարթ» սակագնային փաթեթում:

Եթե Բաժանորդը սույն պայմանների 3.1. i կետում նշված կարգով ստացել է 20 հեռուստաալիք և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, «Դուո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնի կամ «Սմարթ» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակվում է օգտվել 20 հեռուստաալիքներից՝ անկախ նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից:

¹ «Վեգա Սմարթ» սակագնային փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:

² Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

³ Ակտիվացման վճարը չի գործում բոլոր այն Բաժանորդների համար, ովքեր մինևսույն բաժանորդային հասցեում բաժանորդագրված են կամ «Սմարթ հեռուստատեսության» Շառայության հետ զուգահեռ միանում են «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից մանրածախ շուկայում (GPON տեխնոլոգիայով) մատուցվող «Լայնաշերտ ինտերնետի» Շառայության որևէ սակագնային փաթեթի կամ որևէ Շառայությունների փաթեթի: Եթե Բաժանորդի մոտ «Սմարթ հեռուստատեսության» Շառայության շրջանակում արդեն իսկ գանձվել է ակտիվացման վճար, ապա մինևսույն Բաժանորդային հասցեում, ի լրումն գործող Շառայության, «Սմարթ հեռուստատեսության» նոր Շառայության ակտիվացման համար վճար չի գանձվում: Եթե Բաժանորդը մինևսույն Բաժանորդային հասցեում միաժամանակ ակտիվացնում է «Սմարթ հեռուստատեսության» Շառայության ավելի քան 1 Շառայություն, չմիանալով «Լայնաշերտ ինտերնետի» Շառայությանը կամ որևէ Շառայությունների փաթեթի, ապա «Սմարթ հեռուստատեսության» ակտիվացվող բոլոր Շառայությունների համար միանված վճարը գանձվում է միայն 1 անգամ: Բոլոր դեպքերում Բաժանորդի մոտ մինևսույն Բաժանորդային հասցեում «Սմարթ հեռուստատեսության» ծառայության համար ակտիվացման վճար կարող է գանձվել առավելագույնը 1 անգամ՝ անկախ ակտիվացվող «Սմարթ հեռուստատեսության» Շառայությունների քանակից:



Rostelecom

4. Աղյուսակ 4. «Վեգա Դուո» ծառայությունների փաթեթի գնացուցակ՝ «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ Գույք քարտապանների համար

Ծառայությունների փաթեթ Վեգա Դուո	Կոմֆորտ
Հիմնական ծառայություններ	
Ինտերնետի արագություն	25 Մբ/վ
Ներառված հեռուստաալիքների քանակ ⁴	առնվազն 35
Հավելյալ ծառայություններ	
Մուլտիրում	հասանելի ⁵
Մուլտիրում ծառայության Հավելյալ սմարթ սարք	հասանելի
SmartBox Wi-Fi	հասանելի
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	7 օր
Հավելյալ արագություն	հասանելի
Առանձին հեռուստաալիքներ	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի
Ամսավճար	8500 դրամ

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

- 4.1. «Վեգա Դուո» ծառայությունների փաթեթին բաժանորդագրության դեպքում՝
- i. «10 մբ/վ արագություն» ներառվում է «Վեգա Դուո» ծառայությունների փաթեթում,
 - ii. Սույն պայմանների Աղյուսակ 7-ով սահմանված 20 հեռուստաալիքները ներառվում են «Վեգա Դուո» ծառայությունների փաթեթում:
- 4.2. Եթե Բաժանորդը սույն պայմանների 4.1. i. կետում նշված կարգով ստացել է 10 մբ/վ արագություն և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Մարգային 4900» սակագնային փաթեթի, «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել 10 մբ/վ արագությունից անկախ նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից: Եթե Բաժանորդը սույն պայմանների 4.1. ii կետում նշված կարգով ստացել է 20 հեռուստաալիք և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ «Սմարթ» սակագնային փաթեթի որևէ սակագնի ապա շարունակում է օգտվել 20 հեռուստաալիքներից՝ անկախ նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից:

⁴ «Վեգա Դուո» ծառայությունների փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:

⁵ Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:



Rostelecom

5. Աղյուսակ 5. «Վեգա Դուռ Էկոնոմ» սակագնային փաթեթի գնացուցակ՝ «Վեգա ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ Գողջ քարտապանների համար

Ծառայությունների փաթեթ Վեգա Դուռ	Էկոնոմ
Ինտերնետի արագություն	12 Մբ/վ
Ներառված հեռուստաալիքների քանակ ⁶	ամսվազն 45
Մուլտիրում	հասանելի ⁷
Մուլտիրում ծառայության Չավելյալ սմարթ սարք	հասանելի
SmartBox Wi-Fi	հասանելի
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	7 օր
Չավելյալ արագություն	անհասանելի ⁸
Առանձին հեռուստաալիքներ	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի
Ամսավճար	7500 դրամ

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

- 5.1. «Վեգա Դուռ Էկոնոմ» սակագնային փաթեթին հնարավոր է բաժանորդագրվել բացառապես 1 տարվա պարտադիր բաժանորդագրության պայմանով, և Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել Ծառայություններից: Տվյալ դեպքում.
- i. Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է «Վեգա Դուռ Էկոնոմ» սակագնային փաթեթում (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) տրամադրվում է առանց վճարի գանձման),
 - ii. Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ կրկնակի ավելի բարձր արագություն պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ:
 - iii. Սակագնային փաթեթում ներառվում է «Չավելյալ 10» հեռուստաալիքների փաթեթը պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ:
 - iv. «10 մբ/վ արագություն» ներառվում է «Վեգա Դուռ Էկոնոմ» ծառայությունների փաթեթում:
 - v. Սույն պայմանների Աղյուսակ 7-ով սահմանված 20 հեռուստաալիքները ներառվում են «Վեգա Դուռ Էկոնոմ» սակագնային փաթեթում:
- 5.2. Եթե Բաժանորդը սույն պայմանների 5.1. iv. կետում նշված կարգով ստացել է 10 մբ/վ արագություն և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Մարզային 4900» սակագնային փաթեթին, «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, «Դուռ Կոմֆորտ» սակագնային փաթեթին կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել 10 մբ/վ արագությունից՝ անկախ նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից: Եթե Բաժանորդը սույն պայմանների 5.1. v. կետում նշված կարգով ստացել է 20 հեռուստաալիք և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, «Դուռ Կոմֆորտ» սակագնային փաթեթին կամ «Սմարթ» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է օգտվել 20 հեռուստաալիքներից անկախ նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից:
- 5.3. Գործող բաժանորդները, ովքեր օգտվում են «Վեգա Դուռ Էկոնոմ» սակագնային փաթեթից և պարտադիր տարեկան բաժանորդագրության ժամկետը արդեն լրացել է և վերջիններս հանդիսանում են «Վեգա ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ Գողջ քարտապան, կշարունակեն ստանալ սույն պայմանների կետ 5.1.-ի iv., v. ենթակետերով սահմանված առավելությունները առանց պայմանագիրը վերակնքելու պայմանի:
- 5.4. «Վեգա Դուռ Էկոնոմ» սակագնային փաթեթի հետ կապված բոլոր այն պայմանները, որոնք սահմանված չեն սույն պայմաններով, համապատասխանում են «Դուռ Էկոնոմ» սակագնային փաթեթի պայմաններին:

⁶ «Վեգա Դուռ Էկոնոմ» ծառայությունների փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:

⁷ Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:

⁸ Եթե որևէ հավելյալ ծառայություն անհասանելի է, ապա հնարավոր չէ ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում:



Rostelecom

6. Աղյուսակ 6. «Վեգա Տրիո» ծառայությունների փաթեթի գնացուցակ՝ «ՎԵԳԱ ՈՒՌՈՒՂ» ՍՊԸ Գողք քարտապանների համար

Ծառայությունների փաթեթ Վեգա Տրիո ⁹	Մարզային ¹⁰	Ստարտ	Կոմֆորտ	Պրեմիում
Ինտերնետի արագություն	15 Մբ/վ	30 Մբ/վ	50 Մբ/վ	75 Մբ/վ
Ներառված հեռուստաալիքների քանակ ¹¹	առնվազն 50	առնվազն 50	առնվազն 100	առնվազն 155
Անվճար ընդհանուր ցանցի ներսում	0	500	500	700
Անվճար ընդհանուր դեպի տեղական այլ ֆիսկալ ցանցեր	0	200	200	300
Մուլտիրում	հասանելի ¹²	հասանելի	ներառված ¹³	ներառված
Մուլտիրում ծառայության Չավելյալ սմարթ սարք	հասանելի	հասանելի	հասանելի	ներառված մինչև 2 սարքավորում
SmartBox Wi-Fi	հասանելի	հասանելի	ներառված՝ SmartBox Wi-Fi 1,	ներառված՝ SmartBox Wi-Fi 1, SmartBox Wi-Fi 2, SmartBox Wi-Fi 3
Եթերի տեսագրում (NPVR)	հասանելի	հասանելի	ներառված	ներառված
Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն	7 օր	7 օր	7 օր	7 օր
Չավելյալ արագություն	անհասանելի	անհասանելի	անհասանելի	հասանելի
Առանձին հեռուստաալիքներ	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի
Թեմատիկ փաթեթներ	հասանելի	հասանելի	հասանելի	հասանելի
Ամսավճար	8500 դրամ	10000 դրամ	12500 դրամ	20000 դրամ

- 6.1. «Վեգա Տրիո» ծառայությունների փաթեթին բաժանորդագրության դեպքում՝
- «10 մբ/վ արագություն» ներառվում է «Վեգա Տրիո» ծառայությունների փաթեթում:
 - Սույն պայմանների Աղյուսակ 7-ով սահմանված 20 հեռուստաալիքներ ներառվում են «Վեգա Տրիո» ծառայությունների փաթեթում:
- 6.2. Եթե Բաժանորդը սույն պայմանների 6.1. i. կետում նշված կարգով ստացել է 10 մբ/վ արագություն և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Մարզային 4900» սակագնային փաթեթին, «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, «Դուռ Կոմֆորտ» սակագնային փաթեթին կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել 10 մբ/վ արագությունից անկախ նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից: Եթե Բաժանորդը սույն պայմանների 6.1. ii. կետում նշված կարգով ստացել է 20 հեռուստաալիք և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի, «Դուռ» ծառայությունների փաթեթին կամ «Սմարթ հեռուստատեսություն» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է օգտվել 20 հեռուստաալիքներից անկախ նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարից:
- 6.3. «Վեգա Սմարթ», «Վեգա Դուռ» և «Վեգա Տրիո» սակագնային/ծառայությունների փաթեթների հետ կապված բոլոր այն պայմանները, որոնք սահմանված չեն սույն պայմաններում համապատասխանում են «Սմարթ», «Դուռ», «Տրիո» սակագնային/ծառայությունների փաթեթների պայմաններին:

⁹ «Վեգա Տրիո» ծառայությունների փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:
¹⁰ «Վեգա Տրիո Մարզային» սակագնային փաթեթի պայմանները չեն գործում Երևան քաղաքում:
¹¹ «Վեգա Տրիո Ստարտ» սակագնային փաթեթում ներառված հեռուստաալիքների ցանկը համընկնում է «Սմարթ Ստարտ» սակագնային փաթեթում ներառված հեռուստաալիքների ցանկի հետ:
¹² Եթե որևէ հավելյալ ծառայություն հասանելի է, ապա հնարավոր է ակտիվացնել տվյալ հավելյալ ծառայությունը տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում՝ վճարելով սահմանված ամսավճարը:
¹³ Եթե որևէ հավելյալ ծառայություն ներառված է, ապա տվյալ սակագնային փաթեթի շրջանակներում տվյալ հավելյալ ծառայության համար չի գանձվում սահմանված ամսավճարը:



7. Սույն կետի Աղյուսակ 7-ում սահմանված հեռուստաալիքները ներառվում են սույն պայմանների Աղյուսակ 3-ով, 4-ով, 5-ով և 6-ով սահմանված սակագնային/ծառայությունների փաթեթների կազմում:

Աղյուսակ 7

1	РБК
2	Музыка Первого
3	Шансон ТВ
4	TV XXI
5	Кинокомедия
6	Amedia Hit
7	Кинопреьера HD
8	Zee TV
9	Малыш
10	Русская Ночь
11	Amedia Premium HD
12	Оружие ТВ
13	Дом Кино Премиум HD
14	Индийское кино
15	Sony Channel
16	Amedia 1
17	Tiji
18	Бокс ТВ
19	KXL
20	Playboy TV

8. Սույն պայմանները նախատեսված են ֆիզիկական անձ հանդիսացող թե՛ նոր, թե՛ գործող բաժանորդների համար: